

19161

ՄԱՐՏԻՆ ԱՄՅԱՆ

ԱՐԵՎՈՅ ԴԱՅԱՏԵՐՈՒՄ



17

«ՊՐՈԼԵՏԱՐ» Ի  
ՀԱՅԱՍՏԱՆ

891.99

14-52

891.99

Ա-52

մի № 17

20 JAN 2006

ԳՐՈՂԵՑԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՌՅԵ՛Ք!

19 NOV 2010

# ՊՐՈԼԵՏԱՐԻ

ԳԵՂԱԿԱՆԱԿԱՆ ԳԱՂԱՎԱԿԱՆ  
ՄԱՍԱՎԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


ՄԱՐՏԻՆ ԱՄՅԱՆ

40219  
1010

ԿՕ-18

## ԱՐԵՎՈՅ ԴԱՅՏԵՐՈՒՄ

ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ԳՐՈՂԵՑԱՐ» ՈՐԱԹԵՐԹԻ



1936 թ.

Պատ. Խմբագիր՝ Ռ. ԼՈՒՍԻՆՅԱՆ  
Տեխ. խմբ. Մ. ՇԱՏՎՈՐՅԱՆ

Սիրով նվիրում եմ ավտդ ընկեր-  
ներիս՝ Վարդզես Ավագյանին և  
Լիպարիս Բարսեղյանին.  
Մաք. Ա. Ճ. ան

Куда мне радость деть мою?  
В стихи, в графленную осьмину?  
У них расстескались уста  
От ядов писчего листа...

Борис Пастернак

## ՎՈՐՊԵՍ ԽՈՀ

Յելել ես մի խարխուկ տնակից  
Ու թափել և անեծք, և արցունք  
Նրա թեն, նրա գորշ պատերին—  
Յեվ ընկել մի ուղի վոսկեծույլ:

Այդ ուղին տարել ե քեզ առաջ,  
Դու համառ քայլել ես այդ ուղով,  
Մոռացած թե՛ արցունք և թե՛ լաց  
Քայլում ես դու առաջ անհօղղող:

Յեվ ահա այդ ուղում քեզ ճիւմա  
Շոյում ե մի արեվ այնքա՞ն բորբ,—  
Դուրավի շողերով նա իրա  
Վարդեր ե շաղ տվել հոգում քո:

Վառվում ե արդ հոգիդ պատանի՝  
Խնդությամբ վարդաշատ արեվի:  
Խնդություն, խնդություն, յերկնային  
Արեվը քո շուքում կմարի:

Քայլում ես ուղիով ծաղկաշատ,  
Բուրում ե վոսկեփող մի քամի.  
Այդ ուղին, այդ ուղին հորդառատ  
Լույսերով քեզ ընդմիշտ թող տանի:

Ու յերբեք դեպի յետ չնայես,  
Զհիշես տնակը մամռադեմ.  
Քո հոգում թող թախիծ չճնե  
Անցյալըդ արցունքոտ, գորշ ու թեն:

1935

## ՊՈԵՏԻ ՀԵՏ

Թե ուզում ես յերգդ լսեն  
Ժամանակիդ շունչը դարձեր:  
Ես, Զարենց

Իրա վոսկելար քնարը ծեռքին  
Նա իմ տուն մտավ: Գիշեր ե մթին:  
Թելերը լուսե ելեկտրոլամպի  
Դեմքս վողողել ցրվել են պատին:

Նայում ե ուղիղ ուղիղ աչքերիս  
Լոռու ժամադեմ պոետը մեր մեծ  
Ցեվ մտերմաբար գուրգուրում ե ինձ՝  
— Գրի՛ր, պատանի, վստահ ու անկեղծ:

Հիշում ես դու ինձ՝ որերի վիշում  
Քայլել եմ մի որ քնարը ծեռքիս,  
Շարժել քնարիս լարերը խոսուն, —  
Յերգել եմ գարուն, սեր, կարոտ ու վիշտ:

Որերում այն սեփ, որերում խավար  
Թախիծ եմ յերգել վողբ ու «Հառաչանք»,  
Զարքաշ գյուղացու բրտինքը վարար,  
Կյանքն եմ յերգել — արցունք ու տանջանք»:

Յերգել եմ: Այժմ անցել եմ թեև,  
Թեև չեմ յերգում, սակայն տեսնում ես՝  
Որերում այս վառ շրջում եմ յես դեռ  
Իմ քնարի հետ՝ մի աշուղ ինչպես:

Ուզում ես դու եւ վոր քնարը քո՝  
Լինի վոսկելար ու անմահ մնա, —  
Յերգերդ հյուսիսի քո դարի կրքոտ  
Ցեվ հույզերով լի մարտերի նման:

Գուրգուրեց այսպես մեծ պոետը մեր,  
Նայեց աչքերիս՝ կրկին ժպտաղեմ  
Ցեվ, վորպես անցած, անդարձ մի զիշեր,  
Ուրվականի պես մնաց լոկ ստվեր:

Ո՞, դու մեծ պոետ, անանց դու արձան,  
Հորդում ե սիրոս ինչպես գետ զարնան,  
Գուրգուրանքներդ ինձ ուղի դարձան,  
Այո, կերգեմ յես մարտերը վառման:

1934

## ՀԱՅՐԵՆԻՔ

Սիրում եմ քո սիրտը բորբ, ո՞վ, հայրենիք իմ բոսոր,  
Յեվ հասակդ բարձրացող, ծայնդ՝ զվարթ ու հզոր,  
Յեվ դոփյունը բայլերիդ, և յերգերը մարտերիդ,  
Վոր տվին ինձ լի թասով յերգի գինի, սե՞ր հուզող.

Յեվ այսուհետ՝ առահավետ—ըանի յես կամ աշխարհում  
Պիտ սիրեմ ու կսիրեմ քեզ այս ծաղկե աշխարհում.  
Յես քո գրկումն եմ ծնվել, յես քո գրկումն եմ անվել—  
Քո գրկումն ել կմնամ—ըանի դեռ կամ աշխարհում:

1936

## ՍԿԻԶԲԸ

Ասես այս ճոխ բնությունը  
Ել իր սրտում չուներ գույներ,—  
Հորիզոնից մինչ հորիզոն  
Համատարած շարժաղ գույն եր:

Արեվը շեկ—վոսկե սինի՝  
Վոսկենաման հրով յելավ,  
Ժպիտ տվեց հողին, սարին,  
Զյունն ել հոսեց լեռներից վար:

Յեվ ձորերով հազար ու մի  
Զուրը վազեց հորդ ու վարար,  
Հողը բուրեց հո՞վ, դուրալի՝,  
Հողը յերկնեց ծաղիկ գարնան:

Արեմը ագահ՝ լայն հանդերին,  
Վորպես համբուլը, մաղթեց հուր, բոց.  
Կանաչ հազան դաշտերը իմ,  
Կանաչ հազան սարեր ու ձոր:

Այգիները կէկացին,  
Ծառերը բյուր բացին ծաղիկ.  
Դեպի դաշտը խրխնջաց ձին,  
Ու կովերը փախան գոմից:

Յեվ իմ սրտում մի յերգ զնզուն՝  
Աղաղակեց գարնան նման,—  
Ճոխ հույզերի, սիրո, հասուն  
Մրգերի յերգ վորոտածայն:

Զեռքիս առած գարնան քնար՝  
Յես դաշտ յելա համայնական,  
Վոր յերգ հյուսեմ բացվող գարնան,  
Յերգ՝ հույզերի, սիրո, վառման:

— Զնզա՛, դու իմ մանուկ քնար,  
Ցնծա՛, իմ յերգ՝ համայնական:

1935

## ԴԱՇՏԵՐՈՒՄ

Ինչքա՞ն արտեր են վազում,  
Ինչքա՞ն արտեր են հոսում,  
Յեվ ինչքա՞ն են յերգերը անուշ հնչում, խնդագին  
Դաշտերում այս կանաչ—ծռվ,  
Դաշտերում մեր յերգի զիրք,  
Ինչքա՞ն արտեր են վազում,  
Ինչքա՞ն արտեր են հոսում:

Տեսնու՞մ ես դու, — գարուն ե,  
ու գարնանն այս շողշողուն,  
Ինչքա՞ն անուշ յերգեր են նոր բերքի մասին լսվում,  
Յեվ ինչքա՞ն — ինչքա՞ն վազով  
ինչքա՞ն արտեր են հոսում  
Այս բերքով լի դաշտերում, յերգերով լի գաշտերում։

1933

## ԴԱՇՏԵՐ, ԶԵՐ ԳԻՆԻՆ

Յերազել եմ ծեզ,  
Ա՛, կանա՞չ դաշտեր,  
Զգտել եմ՝ արքել  
Սուրբ զինովը ծեր...  
Բայց կարճ են յեղել  
Մանկան ծեռքերն իմ,—  
Ու յես չեմ խմել,  
Դաշտեր, ծեր զինին:  
Մակայն յերբ յեկավ  
Հողմը վիրկարար,—  
Դյութվեցի անհագ  
Դինով ձեր վարար:  
Յեվ ահա արդ յես,  
Դերված ծեր սիրով  
Քայլում եմ ծեր վես,  
Թավ կանաչներով:  
Խմում եմ անկուշո  
Ձեր նուրբ ժաղկունքի  
Բուրմունքը անուշ,  
Ինչպես սուրբ զինի:

## Գ Ա Ր Ո Ւ Կ Ն

Շողմ, արև, շողմ...  
Դ. Մահարի

Շողա', գարուն, շողա',  
Իմ բույր, հրով վառած,  
Սիրտս չի դողդողա  
Քու հուրերի առաջ:

Իմ գարունն ես դու, ո՛,  
Յեկ, վոսկեվառ ցնծա.  
Դու նման չես բոլոր  
Գարուններին անցած:

Թո մեջ պուրպուր, ահա,  
Ինչքա՞ն վարդեր կոկոն  
Բացվում են ինծ նման,  
Լցված սիրո՞վ, հոգո՞վ:

Յեվ դեռ ինչքա՞ն դեռ կան  
Հունդեր, անծիլ հունդեր,  
Վոր ուզում են դառնալ  
Կոկոն, բացված վարդեր:

Շողա՛, գարուն, շողա՛,  
Դարձիր արեվլ վառման,  
Վոր շողերիդ առաջ  
Անծիլ հունդ չմնա,

Վոր հունդերը բոլոր  
Դառնան բացված վարդեր—  
Շողերով քո վառվող  
Կիյուսեմ նոր յերգեր:

1934

## ԳԱՐՆԱՆ ԱՐԵՎԱԾ

Բարձրանում ե արեվը  
Պայքարի, սիրո.  
Իմ կոմյերիտ յերգերը  
Խրոխտ հնչեն թող:

Յեկել ե նա անցնելու,  
Կրկին կըգա հյուր.  
Սիրտս քեզնով ե լիցուն,  
Վառած սիրո հուր:

Դու քերել ես թեժ բոցեր՝  
Սիրող սրտերին,  
Շունչդ ես քերել և բորք սեր  
Հողին, դաշտերին:

Յեվ վարդերին դեռ կոկոն,  
Անծիլ արտերին  
Քերել ես կյանք մի նորոգ,—  
Յե՞վ սե՞զ սարերին:

Ո՞, լեցուն են հանդերը  
Ծփուն յերգերով.  
Կշողշողան վարդերը  
Քո նուրբ, բորբ սիրով:

Արեվի՛ պես բարձրացող  
Սիրո ու շնչի  
Լայն դաշտերում արեվոտ  
Թող յերգս հնչի:

1934

## ԱՅԳԻՆԵՐՈՒՄ

Առավոտյան յեղա աշնան այն այգում,  
Ուր խաղողի ճութերն՝ ինչպես կաթնատու  
Կրծքեր առատ՝ կախվել ելին ծանրացած,  
Փայլում ելին՝ վհնց կապույտը աստղաշատ:

Ասես նրանք ժպտում ելին իմ դիմաց  
Ու ժպիտով, մտերմորեն, մեղմածայն  
Շշնջում ինձ՝ ինչպես յարը իր յարին՝  
— Խոսի՛ր մեզ հետ, հյուսիլ մի յերգ պայքարի

Նրանց մասին, ովքեր թեն ու արեվկեզ  
Որերով՝ միշտ փայփայեցին սիրով մեզ  
Յեվ հողատար մայրը ինչպես վորդուն իր՝  
Մեզ ան տվին, հասունություն սիրալիր:

Ու ճութերը փսխացին հարսի պես,  
Վոսկե աշնան արեվի տակ մեղմահեզ.  
Աչիկների ասեղներով անհամար  
Խտուտեցին իմ աչքերը ինդավառ...

Ու յերգում եմ դեմքե՛ր, ծեռքե՛ր պնդագիզ,  
Զեր յերգը, վոր տվիք մրգեր լիաշիթ.  
Ընդունեցե՛ք իմ այս յերգը սիրասուն,  
Վորպես պարզեց՝ մրգերի դեմ ծեր հասուն:

1935

2



## ԱՐՏԵՐԸ

Ահա նորից արտերը,  
Ծովի նման արտերը.  
Համայնական դաշտերում  
Մեր են յերգում արտերը:

Արեվի շեկ վարսերը —  
Վոսկեթել այդ արտերը  
Հրկիզեցին իմ սրտում  
Բյուր սրտերի հուր սերը:

Յես յերգում եմ արտերը —  
Հոգուս այդ շեկ վարդերը.  
Փոթորկել են նրանք իմ  
Սրտի վարար կրեերը:

1934

## ՖԱԹՄԱ

Ահա նորին, կրկին  
Դու յև կանգնել ահա  
Հասակովդ այդ ծիգ  
Աչքերիս դեմ հիմա.  
Յեվ ուզում եմ յևս իմ  
Զուլվող յերգը այս նոր  
Քեզ նվիրել միայն —  
Վորակս դրոշ բոսոր:

Հորդառաւ ու վարար  
Հույզեցը իմ սրտում,  
Փոթորկում են, ֆաթմա,  
Ակնկոծվում, ճշում.  
— Յերգի՞ր, պոետ, յերգի՞ր,  
Փոթորկող՝ ու անսանձ,  
Կիզիչ յերգեր յերգիր,  
Դաշտեր, հերոս, պայքար:

Յեվ ինչպե՞ս քեզ չերգեմ,  
Դու հերոս իմ, ֆաթմա,  
Չե՞ վոր յերեկ եր դեռ.  
Այս դաշտերում անափ  
Թաղում եյինք հունդեր,  
Տիրու հողի հետ մարտում —

Մինչեվ մութը իջներ,  
Դաշտը դեղներ լուսնով:

Այն հանդերը հիմա,  
Հանդերը բո սնած—  
Այնքա՞ն, այնքա՞ն, այնքա՞ն  
Բարձրացել են ահա,—  
Վոր դաշտերը լայնծիր  
Արծաթել են արդեն,  
Ու դեռ գարնանն անծյուն  
Շարմաղ ձյունով ծածկվել:

Այդ ձյունով ես տալիս  
Քո պարտքը, իմ հերոս,  
Շոնդալից դարիս  
Յերկրին՝ աճող վագրով,  
Վոր յերկիրն իմ փարթամ,  
Իմ յերկիրը ծաղկող  
Ճո՞խ, հո՞րդ լինի, ֆաթմա,  
Ու դու լինես պատվով:

1933

## ՈՒԶՈՒՄ ԵՄ ՁԵԶ ՀԵՏ

Հալվեցին արդեն շողերը շարմաղ,  
Դու անձրեվ հորդեց կապույտն՝ ինչպես մաղ,  
Դարունն արծակեց կանաչ վրան մի,  
Դաշտերը—ուրախ հանդես են պարի:

Դիշերը փուեց վերմակն յերազուն,  
Ուր կարկաչում են ջրերը, վազում.  
Աստղերը՝ ատես պատմում են հերիաթ,  
Լուսինն և դիտում ապշած ու անթարթ:

Դաշտերում անծայր բուրում են անուշ  
Ծաղիկներ, արտեր,—ծփում են աշխուժ. ]  
Վառվել են սիրո կրակովը հուր  
Բազում սիրավառ սրտեր ամենուր:

Վաղ լուսադեմի զեփյուռը մեղմիվ  
Սովում ե,—զիշերն ահա կանթեղվի,—  
— Ծաղիկներ, արտեր, ընդունեք ինծ ել,  
Յնս ել եմ ուզում ծեր սիրով խանծվել:

— Ձեր սիրո ծովում ընդունեք ինծ ել  
Ուզում եմ ծեր հետ սիրել ու սիրվել:

## ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Վորպես համեստ աղջիկ մի,  
Վոր իր դեմքը ժալտալի  
Բացում ե դեմ իր յարի—

Այնպես, զարուն, նազանքով  
Բացում ես դու բուրմունքով  
Ու սիրով լի դեմքը բռ:

## ՀՈՒԶՈՒՄՆԵՐԻ ԳԱՐՈՒՆ

Անաղմուկ, անդորր ուշ գիշեր—մի պահ  
Շըշնջում ե խնծ հարազատ մի ձայն.  
— Այս պահին այդ ի՞նչ, այդ ի՞նչ ես լուել,  
Զե՞ս զգում հորդուն բուրմունքն այս զարնան:  
Կարո՞ղ ես—յերգի՞ր, յերգիչ պատանի,  
Այս զարունը հուր, նոխությամբ հղի,  
Այս զարունը, վոր բերում ե բյուր մարտ,  
Խինդ ու յերգեր վառ ծաղկող յերկրիդ:

Յերգի՞ր, ո՛, յերգիչ, մուտքըն այս զարնան—  
Անափ ովկիանի փոթորկի նման,  
Յերգի՞ր դու նրա հույզերը—առու,  
Յերթը ծավալուն, կրքերը վարար:  
Յերգի՞ր զարունն այս—զարունը մրրիկ,  
Գարունը կարմիր հորդող սրտերի,  
Այս զարունը, վոր մարտիկների հոծ  
Հուզում, մղում ե զրոհ-պայքարի:

— Պիտի յերգեմ յես զարունը վերհաս,  
Կորովը նրա փոթորկող, անսանծ,  
Շունը պիտ յերգեմ բյուր կրքերով լի.  
— Յերգի՞ր, պատանի, յերգի՞ր համարձակ:

— Հունդը պիտ յերգեմ այս հրկեզ զարնան,  
Ու դաշտերը լայն, հույզերով վառված,  
Յեզ համայնական բերքի ու մրգի,  
Ճոխ կյանքի համար՝ պայքարը վառման:—

— Յերգիչ պատանի, յերգի՞ր դու վստահ,  
Յերգի՞ը, պատանի, յերգի՞ր համարձակ:

## ՅԵՐԿՈՒ ՏԵՐԵՎ

Դիշերն ամբողջ սուլեց քամին,  
Աստղերը բյուր՝ բռնեցին պար,  
Սվավացին հավերն անչար,  
Յերք այդ գիշեր սուլեց քամին:

Ծառերն այգում զիլ յերգեցին:  
Զնզաց կախած թառի սիմք,  
Իսկ վերեվում խենթ լուսինը  
Սառած մնաց տեսքով իր սին:

Յեզ մութլուսին, յերբ յես յելա,  
Պատշգամբում յերկու դեղին  
Չոր տերեմլսեր ընկած եյին—  
Այդ մութլուսին, յերբ յես յելա:

Վերցըրի չոր տերեմլսերը՝  
Վորպես ծաղիկ, վորպես նշան  
Բացվող առա՛տ ու ճոխ աշնան,—  
Լիության զու՛յգ բարեմլսերը:

## ԱՐՏԵՐԻ ՅԵՎ ՍԻՐՈ ՅԵՐԳ

Դարձանը այն՝ արեվը հուր,  
Հոհուում եր, շրջում անտուն  
Այս հանդերում, յերբ յես ու դու  
Անցնում եյինք, ժպտում—ժպտում.

Կարծես զորգ եր դաշտն այս լայնծիզ  
Կամ մի կանա՞չ—կանա՞չ թափից.  
Ո՛, ի՞նչ առատ, ալիք-ալիք  
Հորդ արյուն եր զարկում սրտիս:

Հիշում ես դու՝ այս դաշտերում  
Արտերն եյին մեզ ժպտում սեր,  
Յես ել իմ բոց, յես ել իմ հուր  
Սերը համեստ նետեցի բեզ:

\*  
\*\*

Այս ամռանը ահա նորից  
Անցնում եմ այս դաշտերով ծիզ,  
Կանա՞չ-կանա՞չ այն արտերին  
Իջել ե ցող՝ բոսո՞ր, դեղի՞ն:

Այն արտերը անա՞փ կանա՞չ  
Չոծվել են, տե՛ս, վոսկով հիմա,  
Ու տեսնու՞մ ես՝ վոսկեծիծաղ  
Դաշտերում այս ահա նրանց

Հասկերը լի, հասկերը շեկ  
Աճել, ծզվել, բարձրացել են,  
Դեղնազդուխ պտուղ դարձել  
Յեվ բեզ նման հասել, իմ սեր:

1933

## ՍԵՐԸ

Յո սերն ե պահված անտառի ծովի մեջ...  
Ն. Քուչակ

Այդ յերկու կապույտ լճակների մեջ—  
Քո յերկու փայլուն լազուր աչերում  
Պահված ե պայծառ, անաղարտ մի սեր,  
Նա ինձ ե դյուքտում, նա ինձ ե գերում:

Ուզում ես պահել, աչերդ լազուր  
Թերում ես դու միշտ՝ ինձ պատահելիս,  
Բայց նկատում ե հայացքս, իզուր  
Թերում ես ինձնից աչերը բո զինջ:

Կոմյերիտ աղջիկ, մի պահիր իզուր  
Աչերդ՝ կապույտ լճակների պես,  
Իմ հոգին սիրով դեպ քեզ ե վազում,—  
Սիրում եմ յես քեզ, սիրում եմ յես քեզ:

## ՔՈ ԱԶԵՐԸ

Բորբ արեվը ամափի տակից անթիվ, թեժ  
Վոսկի սուր ե կախել բարկ ու շողշողուն։  
Քո աչերը ուներիտ տակ յերկու թեժ,  
Վոսկի հուր են վառել ջերմ ու շողշողուն։

Արեվի այդ անթիվ վոսկի սրերը  
Զերմություն ու շունչ են տալիս,  
Հույս ու կյանք.  
Քո աչերի յերկու վոսկի հրերը  
Խնդություն ու սեր են տալիս,  
Հույս ու կյանք.

Ցես սիրում եմ  
Բորբ արեվը—կյանքի ծով,  
Ցես սեր, ունեմ  
Քո աչերում—կյանքի ծով։

1935

## Ս Ի Ր Ե Ր Գ

Յերկինքը՝ պարզ, յերկինքը՝ զինջ,  
Աստղերը՝ բյուր.

Շոյում և մեզ զովշունչ քամին,—  
Տալիս համբույր:

Վերում՝ աստղեր, վարում՝ դեմքեր  
Ժպտում են վառ,  
Ժպիտներով մենք վողողվեր,  
Խնդում ենք հար:

Այս յերեկո ինչքա՞ն դեմքեր,  
Իմ կյանք սիրուն,  
Սեր են առնում, տալիս են սեր,—  
Սիրում—սիրվում:

1933

## ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Աչերիդ մեջ հերիաթային փայլ կա պայծառ  
Ցեվ զինջ՝ ինչպես զուրն աղբյուրի, զուրը զուլալ:

Կուզեմ սուզվել աչերիդ մեջ խոր ու պայծառ  
Կուզեմ խմել հերիաթային զուրըդ զուլալ:

31

## ՄԻԱՍԻՆ

Կյանքը հոսում ե սահուն  
իրա ընթացքով արագ,  
Այդ ընթացքին են ծուլվում  
Չեռքեր, յերկեր անքանակ:

Իմ յերգերով այս դարի,  
Հոսանքներում ալ-պուրապուր  
Կոչում եմ քեզ.—դե՛, արի՛,  
Փրփուրներում ձեռքդ տուր:

Ու.պղպջակ յերկու հատ՝  
Յեկ, յիս ու դու միասին,  
Ընթացքի մեջ անընդհատ  
Չուլվենք, սահենք միասին:

1934

## ՅԵՐԿՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

1.

Յեկ սովէ եր, և մահ ամենուր,  
Աշուն եր, և միս, և թալան.  
Ու կյանքը՝ վորպես իրիկուն՝  
Յեկ մեռնում եր, բայց և կար...

Հիշում եմ.—Աշուն եր կրքոտ,  
Քամի ուներ թեն ու անծըեվ.  
Իսկ գյուղը՝ բանդվող ու վերքոտ՝  
Վո՛չ խինդ ուներ, վո՛չ վարդեր:

Մի բակում կար թեր ունենի,  
Յեկ պառավ խրճիթ՝ հի՛ն, խարխո՛ւր,  
Ուր հեվում եր վորք մի աղջիկ՝  
Մինչ մթնում եր, լուսանում...

2.

Այսոր նորից գյուղն այն մտա,  
Ճեկ արեվը լայն ժպտաց:  
Թեն ե, աշուն՝ կրքոտ դարձյալ,  
Սակայն այլ աշուն ե սա:

Այս աշնանը մրգերն առաջտ,  
Հասուն ու լի բերք այնքան.  
Ու դաշտերում համայնական՝  
Համայնական սեր ու կյանք:

Նախագահին այս գյուղի  
 Տեսաւ Նա աղջիկ ե մի  
 Համեստ, հասուն կրծքով լի:  
 Կրծքի վրա ուներ ԿիՄ:  
 Բարեկեցի: Նա բնրույշ  
 Վառ հայացքը ինձ թերեց  
 Յեվ աչերով հու՛ր, նախշու՛ն  
 Մեղմ ժապուղով, վողունեց:

Ո՛, հիշեցի յես հանկարծ  
Աշունն այն կրբոտ,  
Քամին ու անծրիմին անդարձ,  
Ուռենին՝ ննջող:  
Հանգող խրճիթն հիշեցի,  
Եյակն այն անտեր,  
Լազուր աչեր հիշեցի՝  
Խավար, աներեր.  
Յեվ աչերի հետ լազուր՝  
Իմ սերն առաջին  
Քո աչերում, արդ հասուն,  
Կոմյերիտ առօիկն:

## ՍԱՅԱԲ-ՆՈՎԱՅԻՆ

Յես կարդում եմ տողերը քո,  
տողերը քո զուհա՞ր, զուհա՞ր,  
Վառ զուհարդար աչքերով իմ՝  
տեսնում եմ քո կյանքն անզուհար  
Ու մորմորով ասում եմ քեզ՝  
«Վայ քու դարին, Սայաթ-Նովա,  
Ամբողջ կյանքում ըրաատ եկար,  
Մե լավ յարի, Սայաթ-Նովա»:

## ԽՈՍՔ՝ ԹԱՓՎՈՂ ՏԵՐԵՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ո՛, ինչքա՞ն ե դժվար, ինչքա՞ն հերոսական  
Այս կոփվը կյանքի—լուսնի կյանքի համար...  
Ու դեռ ինչքա՞ն անդուք ու զեռ ինչքա՞ն անկանգ  
Պիտի մարտենք համառ նրդեններում անմար...

Այս լուս կանգնած ծառը—բարդենին այս անմիտ,  
Վորպես արծիվ անթեփ վօրպես բազե պառավ—  
Զիգ կանգնել ե այգում, խոյացել դեպ յերկինք  
Ու կարդում ե հանդարա կյանքը արդեն մի զար.

Ինչքան ամառ անցավ, յեկալ ինչքան աշուն,  
Այնքան անզամ ծառն այդ տերեվները թափեց.  
Բւ նա ելի, կրկնեն, մերք նորից զա աշուն—  
Պիտի թափի վերասին տերեվները վուկեն.

Սակայն ահա մի ծառ—ծերտկ աշխարհը հին,  
Անորինակ, հրե այս աշնանք վառվող  
Զիլ հողմերի բուքում, թեմ բոցերում մարտի  
Մերկանում ե ընդմիշտ, ընկնում և թուշը, անզո՛ք

Մերկանում ե նա զողը, վորպես ուրու միետրած,  
Փշրվում ե, ցնդում, անդարձ կորչում անհայտ:  
Մըրիկներում այս հուք, հրդեննում մեր վառած  
Բաղծրանում ե կռվով ծաղկափիթիթ մի կյանք:

Ո՞վ կարող եր քեզ ակես, դասակարգ իմ, ուսել  
Նման ձանք կոփվ, անչա՞փ դժվար մի զործ  
Ցեզ փոթորկում անսանն էերտել կյանք, մահ ու սեր,  
Հրդեններում լավագ ծուզել աշխարհ մի նոր:

Ո՛, ինչքա՞ն ե դժվար, բեկամ հերոսական  
Այս կոփվը կյանքի—լուսնի կյանքի համար...  
Բայց զեռ ինչքա՞ն համառ, բայց զեռ ինչքա՞ն  
անկանգ

Պիտի մարտենք հուզող նրդեններում այս վառ,

Կոր յերկինք իմ հերսու ցնծա՞ վերպես ովկիան,  
Արելիները բուքը պարզ ու անկեղծ ժպտան:

1933

## ԱՐԵՎ

### ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Դու սերմի պես ծլել ես,  
Ծլի պես ծզվել  
Ու աճել ես ծլի պես,  
Փարթամ ծառ դարձել:

Յեկ ծառի պես դու փարթամ  
Ճյուղեր ես տվել  
Յեկ այդ ճյուղերիդ վրա՝  
Կոկոն ու տերեվ:

Կոկոնի պես լցվել ես,  
Հունդով ուռնացել,  
Ուռնացել ես ու բացվել  
Նոան ծաղկի պես:

Յեկ բուրմունքդ, ծաղկի պես,  
Ո՛, շուրջդ ես սփռել.  
Յերկրները բազմապես  
Քեզնով են արբել:

Ահավասիկ, ծաղկի պես  
Թերթերդ թափել:  
Դու հասել ես նոան պես,  
Հասուն միքզ դարձել:

Հուր եր կարծես աշխարհը վողջ  
Ու բոցեղեն հրդեհ եր,  
Ուր սիրտը իմ—մի սիրտ բողբոջ—  
Վո՞չ կյանք ուներ, վո՞չ ել սեր:

Թափառական խենթի նման  
Սիրտը ինչպես յեղնիկ վորք՝  
Քեզ եր փնտոռում, փնտոռում եր մայր—  
Արե՛վ, արե՛վ, արե՛վ բորբ:

Քեզ եր փնտոռում սիրտը մանուկ՝  
Սիրո կարոտ աշխարհում,  
Քեզ եր փնտոռում սիրտը դալուկ՝  
Կարոտ զերմ ու բորբ սիրուդ:

Յեկ կայծի պես հըից յելած  
Քո վառ սերը, ո՛, արեվ,  
Նետվեց, ընկավ սիրտը անդարձ—  
Հրդեհներում անվեհեր:

Արդ թող արեվ, կըրակ լինի  
Քո սերը վառ, կենսարար,  
Յեկ թող սիրտը՝ վորպես գինի՝  
Վայելի այն հո՞րդ, վարա՞ր:

1934

## ԱՐԵՎ

### ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Դու սերմի պես ծլել ես,  
Ծլի պես ծզվել  
Ու անել ես ծլի պես,  
Փարթամ ծառ դարձեր

Յեվ ծառի պես դու փարթամ  
Ճյուղեր ես տվել  
Յեվ այդ ճյուղերիդ վրա՝  
Կոկոն ու տերեվ:

Կոկոնի պես լցվել ես,  
Հունդով ուռնացել  
Ուռնացել ես ու բացվել  
Նռան ծաղկի պես:

Յեվ բուրմունքդ, ծաղկի պես,  
Ո՛, շուրջդ ես սփոել  
Յերկրները բազմապես  
Քեզնով են արբել:

Ահավասիկ, ծաղկի պես  
Թերթերդ թափել:  
Դու հասել ես նռան պես,  
Հասուն միքզ դարձել:

Հուր եր կարծես աշխարհը վրդջ  
Ու բոցեղեն հրդեհ եր,  
Ուր սիրտը իմ—մի սիրտ բողբոջ—  
Վո՛չ կյանք ուներ, վո՛չ ել սեր:

Թափառական խենթի նման  
Սիրտըս ինչպես յեղնիկ վորբ՝  
Քեզ եր փնտոռում, փնտոռում եր մայր—  
Արե՛վ, արե՛վ, արե՛վ բորբ:

Քեզ եր փնտոռում սիրտըս մանուկ՝  
Սիրո կարոտ աշխարհում,  
Քեզ եր փնտոռում սիրտըս դալուկ՝  
Կարոտ զերմ ու բորբ սիրուգ:

Յեվ կայծի պես հրից յելած  
Քո վառ սերը, ո՛, արեվ,  
Նետվեց, ընկավ սիրտըս անդարձ—  
Հրդեհներում անվեհեր:

Արդ թող արեվ, կըրակ լինի  
Քո սերը վառ, կենասարար,  
Յեվ թող սիրտըս՝ վորպես գինի՝  
Վայելի այն հո՞րդ, վարա՞ր:

1934

## ԶՈՐԱԳԵՍԻՆ

1.

Հին—հին որերում դու աննպատակ  
Լոռվա լեռների ծոցերովը մեկ  
Հոսել ես՝ հոսել վշշողով սարսափ  
Յեվ ուժիդ կրքից հուզվել, աղմկել,

Քեզ չեն հասկացել այն պահին մարդիկ.  
Ու յերբ գիշերին՝ թուխապ, ու մեզ, ու սեզ  
Լեռների գրկում հուզվել ես կրկին,—  
Հոռեցի Սաքոն այդ քաջը և կարծել.

2.

Իսկ հիմա արդեն լեռներին կոռու  
Ժաման արեվի փոխվել ե այնքա՞ն...  
Ու մարդը՝ յեփված կյանքի փոթորկում  
Քեզ հասկացել ե ու տվել ե փայլ.

Նա հասկացել ե քո ուժը հսկա  
Յեվ զիտե հիմա, թե ինչու համար  
Աղաղակդ ու հուզմունքդ ազահ  
Լեռների գրկում ժխորել են հար.

Յեվ մարդն այժմյան՝ դարբինն այս կյանքի՝  
Փաթաթել ե քեզ բազմաբյուր թելեր,  
Յեվ թելերովն այդ հյուսել քեզ անթիվ  
Գործարան, բաղար, հանքեր ու գյուղեր.

Դիմում եմ յես քեզ՝ այժմ համարձակ  
Հուզվի՛ր, ո՛ հուզվի՛ր՝ վորքան կուզես դու,  
Լսո՞ւմ ես, —մեր այս յերկիրն բազմերակ  
Աղաղակում ե—հոսա՞նք, հոսա՞նք տուր...

## ՆԱՎԵՐԸ

Յեղավ մի որ՝ անթիվ նավեր  
Բաց ովկիանում մեծ հույզերի  
Կովի յելան մեր նավի դեմ,  
Կովի յելան՝ կպան ժայռին:

Հիմա դարձյալ նավեր անթիվ,  
Դավերով լի անթիվ նավեր  
Քեն՝ ու վոխով հիմա կրկին  
Բարձրանում են մեր նավի դեմ:

Բայց նավը մեր ծանր և այնքա՞ն,  
Հեշտ չե նրա ուղին փոխել—  
Պատմությունն և նրա վրա  
Այս մեծ դարի կամքը/բարդել:

Սակայն այն ո՞վ կուզե թեքել  
Ընթացքը այդ հակա նավի,  
Ո՞վ և փորձում կամքով իր նեռ  
Թեքել ընթացքը արեվի:

Ո՛, նավը մեր՝ արեվի պես՝  
Սնդարձ և ու անթեքելի,  
Քանզի զեկը նրա լուսե  
Զեռին և Մեծ Ղեկավարի:

## ԶՈՐԵՐԻ ԳՐԿՈՒՄ

1.

Առավոտյան, յերբ արեվը ժպտաց,  
Ցանկացա նորից հանդերը գնաւ  
Ու սրտիս զբքում հնից մնացած  
Հուշերը բացել, թերթել ու կարդալ:

2.

Յեվ կանգնել եմ յես բլրակի վրա,  
Դիտում եմ... վորքա՞ն ծառեր կան գանգուր.  
Այստեղ ջրերն են վշշում զլգլան,  
Քամին, տերեմներն ի՞նչ զով են յերգում:

Պահ մի դյութվում եմ, դյութվում եմ անհագ  
Ծառերի, քամու անուշ յերգերով.  
Արբում եմ այս շատ, բյուր և բազմերանգ  
Ու բաղցրաքրիջ ծաղկունքի հոտով:

3.

Այստեղ հայրըս ինձ՝ վորպես յերազ մի՝  
Հիշում եմ պատմեց, պատմեց, ո՛, թախծով,  
Վոր սքանչելի այս հանդ-ծորերին  
Տիրում եր մի որ իշխանը կազմով...

Հանդումն այս հիմա ծորերի գրկում,  
Ուր դեմդ անտառն ե, ջրեր քչքան,  
Ուր բնությունն ել մարդ և զուրգուրում,—  
Ցնդել ե, այստեղ Կազլովս ել չկա:

Նոր-նոր տներ են բարձրանում այստեղ,  
Այստեղ քաղաք ե կառուցվում, մի նոր,  
Մի նոր սովորող ե այս վայրում ծնվել,  
Ծնվել, անել ու անում ե թափով:

## ՓՈՔՐԻԿ ԵՄԻԿԻՆ

Վաղը կբացվի նորից վառ գարուն,  
Կըժպտան վառվող ծաղիկներ այնքա՞ն,  
Յեվ համայնական ուրախ դաշտերում  
Քաղցրանուշ կերպեն աղջիկներ այնքա՞ն:

Կըժպտաս դու ել դաշտերի միջին,  
Ծաղիկների պես, աղջիկների հետ,  
Թոթով քո լեզվով կերպես դու մի զինջ,  
Յեվ պայծառափայլ և անուշ մի յերգ:

## Հ Ո Ր Ս

Անցնում եմ յերբեմն շիրիմիդ մոտով,  
Լսում եմ տանջված քո ծայնը կարծես,  
Անհուն տրտունջով, վշտով, կարոտով  
Եցվում ե սիրտս,—ու լալիս եմ յես.

Յեվ արցունքները լալկան աչքերիս,  
Հոգուս մեջ մորմոք՝ մրմնջում եմ յես.  
— Չտեսար լավ որ այն սեվ աշխարհից,  
Հիմա դու ու՞ր ես, հիմա դու ու՞ր ես...

Շարունակում եմ դարձյալ իմ ուղին,  
Զնզում ե դեմս ներկան խնդաշունչ.  
Մոռանում եմ քեզ, անցյալդ դեղին,  
Մոռանում արցունք, կարոտանք, տրտունջ:

## Մ Ո Ր Ս

1.

Այն հախուռն տարում ինծ թողիր տխուք.  
Մանկատան դռանն, արցունքով աղի  
Թրջելով դեմքդ դու գնացիր տուն,—  
Մանկատան դռանն ինծ անմայր թողիր:

Իշխանությունը դարձավ իմ մայրը,  
Իսկ յերկիրը նոր՝ ինծ համար մի տուն.  
Չուր եյիր լալիս դու անզոր մայր իմ,  
Չուր եյի կանգնել յես մոլո՞ր, տխու՞ր:

2.

Հիմա զալիս ես ամեն որ ինծ մոտ,  
(Յերբ աշխատում եմ), նայում ես դեմքիս,  
Ու ներքին մի խոր, մի խոր ժպիտով  
Հրճվում ես անզուսպ՝ նայելով դեմքիս:

Յեվ կարիքը սեվ քո թախծոտ հոգին  
Կրծել ե թեպետ յերկար տարիներ,  
Ու շարմաղ ծյունն ե իջել քո զլսին,  
Ու կյանքն ակոսել դեմքիդ կնճիռներ,—

Բայց, մայր իմ, դու արդ դարձել ես ջահել  
Այս նոր աշխարհի, նոր կյանքի հրում.  
Քո ծեր աչքերում վառվում են ջահեր՝  
Տեսնելով վորդուդ այս մեծ պայքարում:

## ՔԱՐՄՈՇԿԱՆ

Հանկարծ յերեկոն արծաթն իր թափեց,  
Աղմկեց զյուղում լիությունն աշնան,  
Հեռու մի վայրում նվում և ասես  
Այն բաղդրահնչուն, խնդրն գարմոշկան:

— Ինչո՞ւ պիտ նվա գարմոշկան լացով,  
Այս պահին ուրախ, այս աշնանը վառ:  
— Նա լալիս և իր կյանքը թախիծով,  
Կորցրած հնում՝ այն աշնանը մառ:

«Քո և Մթնաձորում» թախիծ և ծորում...  
Յե. Զարենց

Մկրտիչ Արմենին՝ նրա «Հեղնար Աղբյուր»  
գիրքը կարգալուց հետո:

«Չորի Բողազի» զյումբեցիների  
կյանքի աղբյուրն և հոսում այս զրքում,  
Ուստա Մկրտչի բառառն աղբյուրի  
զուլալ զրերն են ծորում այս զրքում:  
Պայծառ Հեղնարի զգացումների  
բյուր աղբյուրներն են փակվում այս զրքում,  
Արմեն Մկրտչի հորդող հույզերի  
աղբյուրի ջուրն և խոսում այս զրքում:

## ԴԵՊԻ ՊԱԳԱԹՆԵՐ

Իմ հոգին լցված, ո՛, վեհ զագաթներ,  
Չեր պայծառ սիրո արելի կանչով,  
Նետվում եմ դեպ ծեզ, սիրուն զագաթներ,  
Չեր պայծառ սիրո արելի կանչով:

Թողնում եմ վարը անթիվ սուրբ զանձեր,—  
Հեծած յերազիս հրեղեն ձիուն,  
Թոշում իմ ահա բարձունքները ծեր,  
Կտրելով լեռներ, ստեալներ անձյուն:

Ո՛, վեր են, վեր են բարձունքները ծեր  
(Թերեվս հոգնի ճանապարհին ծիս,  
Թերեվս զլխիս վարսերը ծյունեն),  
Բայց ծեզնով արքել, ծեզ մոտ եմ զալիս:

Ուսել եմ ահա, չքնաղ զագաթներ,  
Իմաստուն մի բեռ—Հանճարի զանձը,  
Անցնելով ժայռեր ու բազում լեռներ—  
Չեզ մոտ եմ զալիս, զագաթներ բարձր:

Չեզ մոտ եմ զալիս սիրող խենթի պես,  
Թողնելով զանձերն անցած իմ ուղու.  
Սիրում եմ կտրած ուղիս պարզերես,  
Քանզի զանձեր են փոված այդ ուղում:

Բայց կրկին, կրկին զալիս եմ ծեզ մոտ,—  
Ժայթքող հույզերիս Վեզուվը դուք եք,  
Ընկերներ ունեմ ինձ հետ, վոր արնով  
Պիտ զանք, ծեր զանձի Վեզուվը առնենք:



## ՑԱՆԿ

1. Վորպիս խոհ . . . . .	4
2. Գոնաքի հետ . . . . .	6
3. Հայլենք . . . . .	8
4. Սկիզբը . . . . .	9
5. Դաշտերում . . . . .	11
6. Դաշտեր, ձեզ զինքն . . . . .	12
7. Գարուն . . . . .	13
8. Դարնան արևը . . . . .	15
9. Այգիներում . . . . .	17
10. Արտերը . . . . .	18
11. Ֆաթմա . . . . .	19
12. Ուզում եմ քեզ հետ... . . . . .	21
13. Գարնանամուտ . . . . .	22
14. Հուզումների գարուն . . . . .	23
15. Յերկու տերե . . . . .	25
16. Արտերի և սիրո յերդ . . . . .	26
17. Սկըը . . . . .	28
18. Քո աչերը . . . . .	29
19. Սիրյերգ . . . . .	30
20. Ցանկություն . . . . .	31
21. Միասին . . . . .	32
22. Յերկու հանդիպում . . . . .	33
23. Սայաթ-Նովային . . . . .	35
24. Խոսք թափող տերեների մասին . . . . .	36
25. Անվերնագիր . . . . .	38
26. Արկ . . . . .	39
27. Զորագեսին . . . . .	40
28. Նավերը . . . . .	42
29. Զոբերի դրկում . . . . .	43
30. Փոքրիկ եմրկին . . . . .	45
31. Հորս . . . . .	46
32. Մորս . . . . .	47
33. Գարմոշկան . . . . .	48
34. Քառակ . . . . .	49
35. Դեպի գազաթներ . . . . .	50

ՀՀ Ազգային գրադարան



NL0322701

ԳԻՒՅ  
50  
ԿՈՊ.

367686



---

МАРТИН АМЯН

---

# В СОЛНЕЧНЫХ ПОЛЯХ

(На армянском языке)

ИЗД. ГАЗ. „ПРОЛЕТАР“